ՀԱՅՐԵՆԻՔ–ՍՓՅՈՒՌՔ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ք. Ռ.

Խորհրդային Միության փլուզումը նոր հիմքերի վրա դրեց հայրենիք-սփյուռք առնչությունները: Նախկինում սփյուռքահայ գաղթօջախները զրկված էին մայր հայրենիքի հետ սերտորեն առնչվելու հնարավորությունից. սփյուռքի հետ կապը իրագործվում էր բացառապես Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի միջոցով: Սակայն Հայաստանի անկախացումից հետո ստեղծվեցին նոր կազմակերպություններ, որոնք սերտ կապեր հաստատեցին սփյուռքահայ գաղթօջախների հետ: 1988 թ. դեկտեմբերյան աղետալի երկրաշարժը և արցախյան ազգային-ազատագրական պայքարը ևս նոր ազդակ էին, որ սփյուռքահայությունը միահամուռ ձեռնամուխ լինի Հայաստանին աջակցելու գործընթացին: Այդ աջակցությունն արտահայտվում էր ոչ միայն մարդասիրական օգնության հատկացման, այլև երկրում զարգացման կայուն ծրագրերի իրագործմամբ:

Տեսնելով նորանկախ Հայաստանի ծանր կացությունը՝ սփյուռքահայությունը միահամուռ ոտքի կանգնեց հայրենիքին օգնելու համար: Այդ օգնությունը առավել կազմակերպված դարձնելու նպատակով 1992 թ. ստեղծվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամը, որի նպատակն էր «նպաստել հայ ազգային պետականության շուրջ ամբողջ ազգի համախմբմանը, նյութական կայուն պատվար ստեղծել ազգի լիարժեք վերածննդի համար»[1]: Բազմաթիվ սփյուռքահայեր և սփյուռքահայ մի շարք կազմակերպություններ՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), Ամերիկայի հայկական համագումարը (ԱՀՀ), Հայ օգնության միությունը (ՀՕՄ), Հայ աղետյալների օժանդակության մարմինը և այլն, իրենց աջակցությունը ցուցաբերեցին հիմնադրամին:

Հաշվի առնելով 1992-1993 թթ. ձմռան դառը փորձը՝ հիմնադրամը 1993 թ. համայն հայությանը կոչ արեց դրամահավաք սկսել՝ «Ձմեռ 1993-1994»-ը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Խիստ կարճ ժամանակահատվածում հավաքված 7 մլն ԱՄՆ դոլարը եռապատկեց Ք. Քրքորյանը՝ այն հասցնելով 21 մլն դոլարի[2]:

Այդ օգնության շնորհիվ հանրապետության մի շարք քաղաքներում ջեռուցվեցին բնակելի շենքեր, առողջապահության և կրթական հաստատություններ, անխափան աշխատեցին հացի գործարանները, ջրամատակարարման պոմպակայաններն ու հեռախոսային կայանները:

Հայրենիքը սոցիալ-տնտեսական ծանր կացությունից դուրս բերելու համար սփյուռքահայ մի շարք կազմակերպություններ և անհատ գործիչներ բարեգործական ակտիվ գործունեություն ծավալեցին: ՀԲԸՄ-ն ֆի-

---

[1] Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 875, ց. 16, գ. 55, թ. 1:

[2] «Հայաստան» համահայկական հիմնադրամ, 1992-1995, գործունեություն և ֆինանսական հաշվետվություն, Ե., 1995:

նանսավորեց Գյումրիի գեղարվեստի ակադեմիայի և Երևանի ցեղասպանության թանգարանի շենքերի շինարարությունը, նախաձեռնեց նաև Հայաստանի 9 միջնակարգ դպրոցների նորոգումը: Արգենտինահայ տիկնանց հանձնախումբը և ֆրանսահայ բարերար Ա. Մանուկյանը ֆինանսավորեցին Ստեփանակերտի ֆիզիկամաթեմատիկական դպրոցի շինարարությունը, իսկ Ավստրալիայի «Հայ աղետյալների օժանդակության մարմինը»՝ Վանաձորի «Տարոն-4» թաղամասի մանկապարտեզի և պոլիկլինիկայի շինարարությունը:

Սփյուռքահայության աջակցությունը մայր հայրենիքին առավել կազմակերպված և արդյունավետորեն շարունակվեց 1995-1996 թթ.: Ամերիկահայ Մ. արք. Աշճյանը իր վրա վերցրեց Թալիշ գյուղի վերականգնման ծրագիրը: Ֆրանսահայ համայնքը և Գ. Ղազարյանը ֆինանսավորեցին Բաղրամյան քաղաքի մայրության կենտրոնի շինարարությունը[3]:

Հայաստանի մի շարք բուհերում կարիքավոր ուսանողներին հովանավորելու նպատակով որոշ սփյուռքահայեր հիմնեցին ֆոնդեր: Դրանցից էին Երևանի բժշկական համալսարանի կարիքավոր-առաջադեմ ուսանողների հովանավորման «Երվանդ Գրալյան» անձեռնմխելի ֆոնդը (Իրան), ԵՊՀ կարիքավոր-առաջադեմ ուսանողների հովանավորման «Հռիփսիմե Փիրզադյան» անձեռնմխելի ֆոնդը (Իրան), ծնողազուրկ երեխաների «Հ. Փիրզադյան» ֆոնդը և այլն: Մի շարք սփյուռքահայեր նպաստներ հատկացրեցին ՀՀ և ԼՂՀ զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին:

Երկրաշարժից տարիներ անց աղետի գոտին շարունակում էր մնալ անմխիթար վիճակում: Այդ բացը շտկելու համար գործի անցան սփյուռքահայ մի շարք կազմակերպություններ: Դրանցից էին Սիրիայի հայ համայնքը, որի շնորհիվ Գյումրիի «Անի» թաղամասում 2 բնակելի շենք կառուցվեց, և Լիբանանի Աղետյալների օգնության ֆոնդը, որը նույն թաղամասում 4 բնակելի շենք կառուցեց:

Գյումրիի «Անի» թաղամասի մանկապարտեզի շինարարությամբ զբաղվեց շվեյցարահայերի միությունը, որի շնորհիվ ապահովվեց Բաղրամյանի շրջանի 5 գյուղերի ջրամատակարարումը, ինչպես նաև Գյումրիում մանկական արվեստի կենտրոնի շենքի կառուցումը: Հայրենիքի վերականգնման գործընթացից հետ չմնաց նաև բրազիլահայ համայնքը, որը 1995 թ. կազմակերպեց Հայաստանից ուղարկված ապրանքների տոնավաճառ: Վաճառքից գոյացած գումարը հատկացվեց ԼՂՀ-ն ՀՀ-ին կապող 64-կիլոմետրանոց «Գորիս-Ստեփանակերտ» ավտոճանապարհի շինարարությանը: Բրազիլահայությունը այդ ծրագրին մասնակցեց նաև իր սեփական միջոցներով:

Բացի աղետի գոտուց, սփյուռքը օժանդակում էր նաև Արցախին: Գերմանիայի հայ համայնքի հատկացրած միջոցներով վերակառուցվեց Ստեփանակերտի Վարարակն աղբյուրն ու ջրագիծը: 1998 թ. շահագործման հանձնվեց Ստեփանակերտի ջրամատակարարման օղակաձև ցանցը՝ 10-կիլոմետրանոց խողովակաշարով, որը հնարավորություն էր տալիս

[3] «Հայաստան» համահայկական հիմնադրամ, 1995-1996, ֆինանսական հաշվետվություն, 1992-1996 ծրագրային գործունեություն, Ե., 1996:

զգալիորեն բարելավել քաղաքի ջրամատակարարումը: Ծրագիրը ֆինանսավորեցին Տորոնտոյի և Հոլանդիայի հայկական համայնքները: Սակայն սփյուռքահայ կազմակերպությունների հիմնական օժանդակությունը ուղղվում էր գերազանցապես աղետի գոտի և հեռանկարային ծրագրերի կարիք ունեցող հայաստանյան շրջաններ: Շվեյցարահայ «Ռ. Պողոսյան և որդիներ» ֆոնդի շնորհիվ կառուցվեց Թալինի շրջանի 22 գյուղերը սպասարկող ջրատարը, իսկ Գյումրիում սկսեց գործել Պողոսյան կրթական համալիրը: Այս կազմակերպությունը Սպիտակում կառուցեց երաժշտական դպրոց ու մշակույթի պալատ: Ի դեպ, Ռ. Պողոսյանը իր որդիների հետ 1995-2000 թթ. Հայաստանում իրականացրել է շուրջ 2 մլն ԱՄՆ դոլարի ծրագրեր: Իսկ ՀԲԸՄ-ն ապահովեց Արափի գյուղի ամրացումն ու նորոգումը: Շվեյցարահայ «Իզմիրլյան» ֆոնդը ֆինանսավորեց ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ինստիտուտի 4-րդ և 7-րդ մասնաշենքերի շինարարությունը: Երևանի ֆիզմաթ դպրոցի հանրակացարանի հիմնարար վերակառուցումն իրագործվեց «Ռ. Պողոսյան և որդիներ» ֆոնդի շնորհիվ, իսկ նույն դպրոցի ջեռուցման համակարգի վերակառուցումը ֆինանսավորեց իրանահայ բարերարուհի Վ. Փափազյանը:

Հայրենիքի նկատմամբ հոգատար պատրաստակամությամբ աչքի ընկավ հատկապես արգենտինահայ համայնքը: Մի խումբ արգենտինահայեր Կ. Փոթիկյանի նախաձեռնությամբ ֆինանսավորեցին Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի 67 տների վերականգնման ծրագիրը, որի իրագործման շնորհիվ ոչ միայն բարելավվեցին բնակիչների կենցաղային պայմանները, այլև շատերը վերադարձան գյուղ: Իսկ արգենտինահայ Հ. Թախթան ֆինանսավորեց Վաղուհաս գյուղի նոր դպրոցի կառուցումը: Հայաստանում «Արգենտինայի Հանրապետություն» դպրոցի հովանավորումն իրականացվեց արգենտինահայ «Պողոս Արզումանյան» ֆոնդի շնորհիվ:

Բարեգործական գործունեությամբ էր զբաղվում նաև ֆրանսահայությունը: Ֆրանսահայ բարերարուհի Տ. Բոյաջյանը, վաճառելով իր առանձնատունը, ֆինանսավորեց Գյումրիի բնակելի շենքի 2 մասնաբաժինների շինարարությունը[4]: Ֆրանսահայ համայնքը Գյումրիի «Մուշ» թաղամասում կառուցեց միջնակարգ դպրոց, որի բացումը տեղի ունեցավ 1999 թ.: Այդ համայնքի հատկացրած միջոցներով դպրոցներ են կառուցվել նաև Սպիտակում:

Արցախյան պատերազմում զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաների ամենամյա նպաստները վճարելու համար մի շարք սփյուռքահայեր ստեղծեցին անձեռնմխելի ֆոնդեր: Դրանցից առաջինը Աննա և Հրայր Հովնանյանների «Ի հիշատակ Գարեգին Առաջին Վեհափառ Հայրապետի» ֆոնդն էր, որտեղ ներդրվեց 500 հազար ԱՄՆ դոլար: Այնուհետև ստեղծվեցին «Գրիգոր և Դանիել Շահինյաններ», «Պոլ Զեքյան», «Լիլիան Թոչունյան» ֆոնդերը: Իսկ շվեյցարահայ Տ. Իզմիրլյանը 13 տարով ստանձնեց 2 ամսվա նպաստներն

[4] «Հայաստան» համահայկական հիմնադրամ, 1997-1998, ֆինանսական և ծրագրային հաշվետվություն, Ե., 1999:

ամբողջությամբ վճարելու պարտականություն՝ ընդհանուր առմամբ խոստանալով 650 հազար ԱՄՆ դոլար[5]:

Սփյուռքահայ անհատ բարերարների գործունեությունը Հայաստանում նկատելի է ամենուր: Դրվատանքի է արժանի հատկապես շվեյցարահայ հասարակական գործիչ Պ. Մսրլյանի նվիրատվությունը: Նա, 1992 թ. այցելելով մայր հայրենիք, «Հայաստան» հիմնադրամին հատկացրեց 50 հազար ԱՄՆ դոլար, ինչպես նաև պարտավորվեց, 1993 թ. սկսած, ցկյանս ամեն տարի, որպես տուրք, հիմնադրամին վճարել 5 հազար ԱՄՆ դոլար:

1999 թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում ընդունեց սկսել ԼՂՀ շրջաններն իրար կապող «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու շինարարությունը: Նույն թվականին Լոս Անջելեսում տեղի ունեցած հեռուստամարաթոնում հավաքվեց 5 մլն ԱՄՆ դոլար: 2000 թ. արդեն սկսվեց ճանապարհի շինարարությունը, որում իր ակտիվ մասնակցությունն ունի հատկապես սփյուռքահայությունը: Միայն ամերիկահայ բարերար Ք. Քրքորյանն այդ ծրագրի իրագործման համար հատկացրեց 1 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՀԲԸՄ նախագահ Լուիզ-Սիմոն Մանուկյանը՝ 700 հազար:

Անմնացորդ նվիրումով հայրենիքին օժանդակում էր Շ. Ազնավուրը: Նա դեռևս դեկտեմբերյան աղետալի երկրաշարժի օրերին ստեղծեց «Ազնավուրը Հայաստանին» կազմակերպությունը, որը մի շարք բարեգործական ծրագրեր իրականացրեց Հայաստանում:

Ընդամենը ութ ամսում հայ և ֆրանսիացի մասնագետների միջոցով 1992 թ. կառուցվեց Հոկտեմբերյանի պահածոների գործարանը, որի բացումը կատարվեց աշխարհահռչակ երգչի մասնակցությամբ: Իր հայրենանվեր գործունեության համար Ազնավուրին շնորհվել է Հայաստանի Հանրապետության հատուկ հանձնարարություններով դեսպանի կոչում:

Հիշարժան է հատկապես 1994 թ. Ազնավուրի կողմից Հայաստան բերված 40 տոննա մարդասիրական օգնությունը՝ մթերք, հագուստ և բժշկական սարքավորումներ: «Ազնավուրը Հայաստանին» կազմակերպությունը, ժամանակի ընթացքում Հայաստանի կարիքավորներին մարդասիրական օգնություն ցույց տալուց բացի, Հայաստանում սկսեց իրականացնել ՀՀ տնտեսական ինքնուրույնության ամրապնդմանն ուղղված մի շարք ծրագրեր: Դրանցից էր ֆրանսիական՝ «Էներգիա Հայաստանի համար» կազմակերպության մշակած ծրագիրը, որի նպատակն էր Հայաստանի փոքր հիդրոէլեկտրակայանների վերականգնումը: Շ. Ազնավուրի միջնորդության շնորհիվ Եվրոպական տնտեսական համագործակցության հումանիտար բաժնի կողմից ստացվեց առաջին փուլի ֆինանսավորումը՝ մոտ 450 000 ԱՄՆ դոլար, որով սկսվեցին մի շարք հիդրոէլեկտրակայանների վերականգնողական աշխատանքները:

Շ. Ազնավուրի շնորհիվ է, որ Եվրոհամայնքի հումանիտար գրասենյակը 1995 թ. համաձայնեց պայմանագիր կնքել «Ազնավուրը Հայաստանին» կազմակերպության հետ՝ Երևան քաղաքը հոսանքով ապահովելու համար: Ծրագիրը նախատեսում էր 3100 000 ԱՄՆ դոլար արժողությամբ

[5] «Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆինանսական և ծրագրային հաշվետվություն, Ե., 2001:

մազութի և գազի գնում՝ 75 օր շարունակ երևանցիներին օրական 2 ժամ հոսանք ապահովելու նպատակով[6]:

Իրանահայ բարերար Գ. Փիրզադյանը ևս այն սփյուռքահայերից է, որը Հայաստանի անկախացումից անմիջապես հետո ձեռնամուխ եղավ հայրենիքի վերականգնման գործին: Նրա անունը սերտորեն առնչվում է «Հայաստան» հիմնադրամին: Գ. Փիրզադյանը օժանդակեց Երևանի պետական համալսարանի կարիքավոր-առաջադեմ ուսանողներին: Նրա հատկացրած 40 640 ԱՄՆ դոլարը իր իսկ առաջարկությամբ դարձավ իր հանգուցյալ տիկնոջ՝ Հ. Փիրզադյանի անունը կրող անձեռնմխելի ֆոնդ, որից գոյացած տոկոսներով պետք է վճարվեին վերոհիշյալ ուսանողների ուսման վարձերը[7]: Գ. Փիրզադյանի հաջորդ հատկացումը հիմնադրամի «Նպաստներ զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին» ծրագիրն էր՝ 52 533 ԱՄՆ դոլար: Նույն սկզբունքով ստեղծվեց անձեռնմխելի ֆոնդ, որից գոյացած տոկոսները հատկացվում են ծրագրին:

Գ. Փիրզադյանի հատկացրած 26 150 ԱՄՆ դոլարով ստեղծվեց մի անձեռնմխելի ֆոնդ ևս, որից գոյացած տոկոսները պետք է հատկացվեն ծնողազուրկ երեխաներին արհեստներ սովորեցնելուն[8]: 1995 թ. այցելելով Հայաստան՝ 94-ամյա Գ. Փիրզադյանը հենց հայրենիքում իր ունեցվածքի մի մասը կտակեց «Հայաստան» համահայկական հիմնադրամին:

Ամերիկահայ բարերարներ են Վարդգես և Ռիտա Պալյանները: Ռ. Պալյանը ութ տարի եղել է ՀԲԸՄ Վաշինգտոնի բաժանմունքի և երկար տարիներ՝ Ամերիկայի բաժնի փոխատենապետը: Նրա օժանդակությամբ, 1988 թ. սկսած, բազմաթիվ հայ և ամերիկացի ուսանողներ ամառային դասընթացներ են անցել ԵՊՀ-ում, սովորել հայոց լեզուն, ծանոթացել հայ մշակույթին, հայ հասարակական կյանքին:

Ռ. Պալյանը աչքի է ընկել հատկապես իր մշակութային ծրագրերով, որոնցից էր Հայաստանի գեղագիտական կենտրոնի երեխաների ցուցահանդեսի բացումը և դրա երկու տարվա շրջագայությունը ԱՄՆ-ում: Ռ. Պալյանը 1989 թ. Թեքեյան մշակութային միության կրթական գործի կազմակերպիչն էր և հատկապես շատ գործեր է կատարել Թեքեյանի անունը կրող՝ Երևանի, Գյումրիի, Կարբիի վարժարանների համար: 1994 թ. Ռ. Պալյանի կողմից ԵՊՀ-ի համար որպես հիմնադրամ հավաքվել էր 385 հազար ԱՄՆ դոլար, ինչպես նաև ակտիվ մասնակցություն ցուցաբերվել համալսարանի 75-ամյակի տոնակատարությանը[9]: ԵՊՀ-ն Ռ. Պալյանին շնորհել է պատվավոր դոկտորի կոչում:

Պալյան ամուսինները ՀԲԸՄ-ի հետ ստեղծեցին հիմնադրամ, որը 1996 թ. դրությամբ հասնում էր 450 հազար ԱՄՆ դոլարի, որից 100-հազարական դոլար նախատեսված էր ԵՊՀ-ի, Հայաստանի ամերիկյան համալսարանի, ՀԲԸՄ երիտասարդական ծրագրի, Թեքեյան մշակութային միության համար:

---

[6] Հայաստանի Հանրապետություն (այսուհետև՝ ՀՀ), 21.XII.1995:
[7] Նույն տեղում, 2.VIII. 1996:
[8] Նույն տեղում:
[9] Ազգ, 11.XI.1996:

Ռ. Պալյանը ներկայացնում է նաև Հայ-ամերիկյան մշակութային միությունը, որը հիմնվել է 1995թ. Վաշինգտոնում: Այդ միության նպատակն է սատարել Հայաստանի գիտամշակութային արժեքների ծավալմանը և իրականացնել բազմաբնույթ ծրագրեր: Միության և Ռ. Պալյանի շնորհիվ Հայաստանում բացվեց մամոգրաֆիայի կենտրոն:

Ամերիկահայ անհատ բարերարներից է Ա.Մաթևոսյանը: Մաթևոսյան քույրերը առաջիններից էին, որ դեկտեմբերյան աղետալի երկրաշարժից հետո հայրենիքին փոխանցեցին 50 հազար ԱՄՆ դոլար: Այնուհետև նրանք մասնակցել են հայաստանյան և արցախյան բոլոր ձեռնարկումներին: Ա. Մաթևոսյանն առաջին անգամ Հայաստան այցելեց 1994 թ.:

Այցելելով Վայոց ձորի Հերմոն գյուղի մոտ գտնվող մանկական ճամբարը՝ որտեղ հանգստանում էին զոհված և վիրավոր ազատամարտիկների երեխաները, նա հանձն առավ վերանորոգել ու վերակառուցել այն և դարձնել գիշերօթիկ դպրոցական համալիր: Չորս տարվա ընթացքում նորոգվեցին հին տնակները, ավարտվեց ննջարանային մասնաշենքի քառահարկի կառուցումը: Միայն առաջին փուլի համար Ա.Մաթևոսյանը ծախսեց 435 հազար ԱՄՆ դոլար և դեռ դպրոցական ու մարզական մասնաշենքերի, լողավազանի կառուցման ծրագրեր ուներ: Ա. Մաթևոսյանի նվիրատվություններով զույգ դահլիճներ նորոգվեցին ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում, իսկ ՀՕՖ-ին նվիրաբերած մեկ միլիոն ԱՄՆ դոլարի տոկոսները նա նպատակաուղղեց «Մատթեոսյան կրթավճար» ծրագրին: Այս մեծ հայուհին 3 մլն ԱՄՆ դոլար ներդրեց Վաշինգտոնում ցեղասպանության թանգարան բացելու համար:

Հայաստանի ազգային կապիտալի մեջ իր լայնամասշտաբ ներդրումներով հայտնի է հատկապես ամերիկահայ միլիարդատեր Ք. Քրքորյանը: Նա հիմնել է Լինսի բարեգործական հիմնադրամը, որի նպատակը Հայաստանում նոր աշխատատեղերի ստեղծումն է, աղքատության մեղմացումը, Հայաստանի տնտեսությունն առաջ մղելը: 1988-1998 թթ. Լինսի հիմնարկը Հայաստան է տեղափոխել մոտ 300 մլն դոլարի մարդասիրական և բժշկական օգնություն: 1988 թ. երկրաշարժից հետո ամերիկահայ բարեգործական 7 կազմակերպության նախաձեռնությամբ գոյացած Հայկական միացյալ ֆոնդի մարդասիրական բոլոր առաքումները Հայաստան կատարվում են Քրքորյանի տրամադրած փոխադրական ծառայության միջոցներով:

Ազգային մեծ բարերարը արցախահայությանը օժանդակելու նպատակով 3 մլն ԱՄՆ դոլար նվիրաբերեց Արցախին[10]: Հայաստանի տնտեսությունը խթանելու նպատակով Քրքորյանը 100 մլն ԱՄՆ դոլար ներդրեց Հայաստանում: Այնուհետև գալով Հայաստան՝ նա այդ գումարը հասցրեց 250 մլն դոլարի[11]: Ակնհայտ էր, որ այս ծրագրի իրագործումով էական փոփոխություններ կկատարվեին Հայաստանի տնտեսության, հատկապես ֆինանսաբանկային համակարգում: Ընդ որում, ծրագրի արդյունավետ իրագործման դեպքում Ք. Քրքորյանի հատկացրած դրամագլուխը ավելանալու էր: Ք.Քրքորյանը առաջին անգամ Հայաստան այցելեց 1998 թ.

---

[10] Նույն տեղում, 11.III.1992:

[11] *Общая газета,19-25.VIII.1999.*

հունիսին: Հանդիպելով ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանին՝ Քրքորյանը քննարկեց Հայաստանի մանր ու միջին բիզնեսի համար իր հատկացրած 100 մլն ԱՄՆ դոլար վարկի տրամադրման մեխանիզմները, ինչպես նաև մի շարք նոր ծրագրերին իր հնարավոր մասնակցության հարցը: Այդ մեծածավալ ներդրումը Քրքորյանի առաջին ներդրումը չէր Հայաստանում:

1988թ. Սպիտակի երկրաշարժից հետո նա մեծ գումարներ է ներդրել «Հայաստան» հիմնադրամում: Հայտնի է նրա 14 մլն դոլարի ներդրումը «Ձմեռ-93-94» ծրագրին: Իսկ Հայաստանը և Արցախը միմյանց կապող ճանապարհի կառուցման համար 1997 թ. նա հատկացրեց 4,7 մլն ԱՄՆ դոլար: Սպիտակի երկրաշարժի 10-ամյակի շրջանակներում Ք. Քրքորյանը 15 մլն դոլար հատկացրեց աղետի գոտու վերականգնմանը:

1998 թ. Լոս Անջելեսում ՀՀ Նախագահը Ք. Քրքորյանին հանձնեց ՀՀ անձնագիր՝ կացության հատուկ կարգավիճակով:

Արցախին ցուցաբերած օգնությամբ հատկապես աչքի ընկավ Լուիզ-Սիմոն Մանուկյանը, որը, 1999 թ. այցելելով Արցախ, պատրաստակամություն հայտնեց Արցախում մարդասիրական ծրագրերի իրականացման համար հատկացնել ավելի քան 1 մլն ԱՄՆ դոլար: Լուիզ-Սիմոնը իր եղբայր Ռիչարդ Մանուկյանի հետ 2 մլն դոլար է նվիրաբերել Երևանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարությանը[12]: Ազգային մեծանուն բարերարների կողմից դա երկրորդ խոշոր նվիրատվությունն էր տաճարի շինարարությանը: Նրանց առաջին նվիրատվությունը 3 մլն դոլար էր կազմում:

Մի շարք սփյուռքահայեր քայլեր ձեռնարկեցին Հայաստանի գործարարությանը զարկ տալու ուղղությամբ: Ամերիկահայ գործարար, ամերիկյան «Հոբվիլդ» ընկերության նախագահ Վահագն Հովնանյանը Երևանի քաղաքապետարանի հետ 100 մլն ԱՄՆ դոլարի պայմանագիր կընքեց, ըստ որի՝ Երևանի հյուսիսարևմտյան մասում պետք է կառուցվեին 2-3-հարկանի ամերիկյան տիպի 1000 քոթեջներ[13]: Թաղամասում կլինեին հիվանդանոցներ, մարզադահլիճներ, դպրոցներ, խանութներ: Վահագնի թաղամասը նախ և առաջ նախատեսված էր արտերկրի հայրենակիցների համար, որոնք նախնիների հողում կցանկանային ունենալ իրենց օջախը: Թաղամասի շինարարությունը նախատեսվեց ավարտել 2003 թ.: Այդ ծրագիրը, անշուշտ, ուղղված էր Հայաստանում գործարարության խթանմանը: Հայաստանում նման մեծ ծրագիր կիրառվում էր առաջին անգամ. ծրագրում ներգրավվելու էր մոտ 20 հազար մարդ, իսկ ավանի ավարտից հետո նրա սպասարկման բաժնում աշխատելու էր 1200 մարդ: Վ. Հովնանյանը 2000 թ., երբ դեռ ընթացքի մեջ էր Վահագնի թաղամասի շինարարությունը, նախաձեռնեց մի նոր ծրագիր: Դա Հայաստանում զբոսաշրջության կենտրոնի շինարարության ծրագիրն էր: Վահագնի թաղամասի անմիջական հարևանությամբ կառուցվող կենտրոնների թիվը նախատեսվեց հասցնել 10-12-ի: Հայաստանի տարածքով մեկ տեղակայված տնակների ընդհանուր թիվը լինելու էր 200, այսինքն՝ յուրաքանչյուր կենտրոն կունենար 19-20 տնակ՝ 2-4 հոգու համար նախատեսված[14]:

---

[12] Ազգ, 1.VII.2000:
[13] Նույն տեղում, 25.VII.1998:
[14] Նույն տեղում, 21.IV.2000:

Ազգային մեծ բարերար է Ալեք Մանուկյանը: Ա. Մանուկյանը սփյուռքի ամենագործուն կազմակերպություններից մեկի՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ է ընտրվել 1953 թվականին: Նրա շնորհիվ բարեգործականը դարձել է հզոր կազմակերպություն: Նա առաջին սփյուռքահայերից էր, որը զորավիգ կանգնեց անկախ Հայաստանի բարգավաճմանը: Իր ազգանվեր գործունեության համար Ա. Մանուկյանը արժանացել է ՀՀ ազգային հերոսի, ինչպես նաև ՀՀ պատվավոր քաղաքացու կոչումների: Ա. Մանուկյանի՝ մեծ հայասերի սիրտը դադարեց բաբախել 1996 թ. հուլիսի 10-ին: Սակայն նրա գործը շարունակեց դուստրը՝ Լուիզ-Սիմոն Մանուկյանը:

Բացի անհատ բարերարներից, Հայաստանում հեռանկարային ծրագրերի իրագործմամբ աչքի են ընկնում սփյուռքահայ մի շարք կազմակերպություններ: Անգնահատելի օգնություն ցուցաբերեց մայր հայրենիքին Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), որը հիմնադրման օրվանից ջանք չի խնայել օգնելու հայությանը: Այդ օգնությունը առավել նպատակաուղղված դարձավ երկրաշարժից և Հայաստանի անկախացումից հետո:

ՀԲԸՄ-ն ակտիվ աջակցություն է ցուցաբերում ինչպես գաղթաշխարհին, այնպես էլ հայրենիքին: ՀԲԸՄ-ի հայաստանյան ծրագրերից են Հայաստանի ամերիկյան համալսարանի բացումը, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի ելույթների կազմակերպումը ինչպես հայրենիքում, այնպես էլ արտերկրում, պլաստիկ վիրահատության և վերականգնողական կենտրոնի բացումը Էրեբունի հիվանդանոցում: Բարեգործականի հայաստանյան ծրագրերից են նաև Գյումրիի սառցարան-պահեստը՝ 10000 տոննա տարողությամբ, երաժշտության և արվեստի ակադեմիայի վերաշինությունը:

Միայն 1993 թ. ընթացքում ՀԲԸՄ-ի շնորհիվ Հայաստանում և Արցախում բաշխվեց 1500 տոննա սննդամթերք հիվանդանոցներին և մանկատներին, ինչպես նաև 65 հազար ընտանիքների[15]: Բարեգործականի կողմից ֆինանսավորվեցին Երևանի, Էջմիածնի, Սևանի և Հրազդանի 4 բարեգործական ճաշարաններ, Արարատյան թեմի հետ 1991 թ. ստեղծված Սևանի Աստվածաբանական ճեմարանը, իսկ 1993 թ.՝ Նորքի, Արաբկիրի և Մալաթիայի Հայորդաց տները: ՀԲԸՄ-ն նվիրատվություններ տվեց նաև Ս. Էջմիածնի Մայր Աթոռին, Հայաստանի ԳԱԱ-ին, ԵՊՀ-ին, Պետական ճարտարագիտական համալսարանին, Մատենադարանին և Արցախի սոցիալական նախարարությանը:

Հայաստանում կարևոր ծրագրեր իրականացրեց Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ), որը Հայ առաքելական եկեղեցու՝ ԱՄՆ-ի արևելյան թեմի սոցիալական կառույցն է և սկզբնական շրջանում կոչվում էր Թեմական հայ օգնության ֆոնդ:

ՀՕՖ-ը ստեղծվել է 1988 թ. երկրաշարժից անմիջապես հետո: Այն իր բարեգործական առաքելությունը հայրենիքում իրականացնում է Հայաստանի իր մասնաճյուղի միջոցով. 1994 թ. Երևանում բացվեց Հայ օգնության ֆոնդի գրասենյակը: ՀՕՖ-ի առաջին նպատակն է եղել օգնել Ստե-

[15] Ազգ, 18.XI.1994:

փանավանի վերականգնմանը, այնուհետև կազմակերպեց սննդամթերքի մեծաքանակ առաքումներ Հայաստան, ինչպես նաև սկսեց զբաղվել ԱՄՆ կառավարության կողմից տրվող օգնությամբ: ՀՕՖ-ը իրագործում է կրթությանը, մշակույթին, առողջապահությանը նվիրված ծրագրեր: ՀՕՖ-ը ֆինանսավորեց նաև Ստեփանավանի թիվ 1 գիշերօթիկ դպրոցին կից ագարակ զարգացնելու ծրագիրը: Սյունյաց թեմի հետ համագործակցելով՝ ՀՕՖ-ը հովանավորեց Եղեգնաձորի շրջանի «Անահիտ» ճամբարի վերականգնողական, վերանորոգման և նոր շինությունների կառուցման ծրագրերը: ՀՕՖ-ի՝ բնապահպանական հարցերով զբաղվող խումբը ստանձնեց նաև Խոսրովի արգելոցի պահպանումը և ղեկավարումը:

1994 թ. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը 80 000 ԱՄՆ դոլար հատկացրեց ՀՕՖ-ին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության հետ համագործակցելու «Փարոս» ծրագիրը իրականացնելու համար[16]:

1999 թ. ՀՕՖ-ի տասնամյա գործունեության ընդհանուր ծրագրային գումարային արժեքը կազմում է մոտ 170 մլն ԱՄՆ դոլար[17]: Կազմակերպության ծրագրերի գլխավոր ֆինանսավորողը ԱՄՆ գյուղդեպարտամենտն է, որոշակի գումար են կազմում ՀՕՖ-ի աջակիցների նվիրատվությունները (5500 նվիրատու ԱՄՆ-ում):

ՀՕՖ-ը իրականացրել է Երևանի կրթության, գիտության, մշակույթի բոլոր բյուջետային հիմնարկների շուրջ 160 հազար աշխատողների, բարեգործական ճաշարանների, գիշերօթիկ դպրոցների, մանկատների ծրագրերը: ՀՕՖ-ի և ՀՀ կառավարության մարդասիրական օգնության կենտրոնի հետ համատեղ իրականացվեց ամառային ճամբարների կազմակերպման ծրագիր, ըստ որի՝ ապահովվեց շուրջ 35 հազար երեխաների հանգիստը Հանքավանի և Ծաղկաձորի ճամբարներում: ՀՕՖ-ի նպատակաուղղված ջանքերի շնորհիվ Հայաստանում պահպանվեցին նախադպրոցական համակարգը, ինչպես նաև մանկապարտեզների ցանցը:

ՀՕՖ-ի ծրագրերի առաջին պլանում միշտ եղել է աղետի գոտին: Երկրաշարժից հիմնովին ավերված Վազգեն Ա-ի անվան դպրոցը ՀՕՖ-ի աջակցությամբ վերակառուցվեց՝ վերածվելով կրթական ժամանակակից համալիրի: ՀՕՖ-ի միջոցներով բարեկարգվեց ու կարգի բերվեց Գյումրիի «Հաղթանակ» զբոսայգին, շահագործման հանձնվեց Շիրակի մարզի Կապս գյուղի մանկապարտեզը:

ՀՕՖ-ը դպրոցներ կառուցեց նաև Ստեփանավանում, Արարատի մարզի Այնթափ գյուղում և այլն: ՀՕՖ-ը վերանորոգեց Գյումրիի թափառաշրջիկ երեխաների կենտրոնը, ինչպես նաև իրականացրեց հանրակրթական դպրոցների հազարավոր աշխատողների օգնության ծրագիրը: ՀՕՖ-ը հովանավորեց «Այբբենարանի» տպագրությունը, երեխաների հանգստի կազմակերպումը ճամբարներում, ՆԳ և ԱԱ նախարարության անչափահասների ընդունման տեղաբաշխման բաժնի մասնաշենքի վերանորոգումը, «Տաթև» մանկական երգչախմբի հովանավորությունը, «Մատթեոսյան կրթավճար» ծրագիրը և այլն: Կարևոր ծրագրերից է նաև մանկատների

[16] ՀՀ, 19.VIII.1994:
[17] Նույն տեղում, 20.IX.2000:

շրջանավարտ սաների հետագա ուսումնառության կազմակերպումը: Իրականացվում է նաև մանկապարտեզներին նվիրված ծրագիր, որի շրջանակները անընդմեջ ընդլայնվում են: ՀՕՖ-ը իրականացնում է նաև հայ բժիշկների վերապատրաստումը ԱՄՆ-ի լավագույն հիվանդանոցներում:

1996 թ. Գյումրիում ստեղծելով իր մասնաճյուղը՝ ՀՕՖ-ը առավել մանրակրկիտ ձևով ծանոթացավ Շիրակի մարզում գոյություն ունեցող խնդիրներին: Տեսնելով մարզում գոյություն ունեցող համատարած գործազրկությունը՝ ՀՕՖ-ը 1997 թ. որոշեց տարիքային տարբեր խմբերի մարդկանց առնչել ժողովրդական արհեստների հետ՝ կիրառելով իր տեսակի մեջ նորույթ հանդիսացող «Արհեստագործական ուսուցում և ձեռներեցություն» կոչվող տիպային ծրագիրը: Ծրագրի նպատակն էին Հայաստանում նոր աշխատատեղերի բացումն ու արտադրություն կազմակերպումը: Աշխատանքի հրավիրվեցին իրենց գործին տիրապետող տասնյակ մասնագետներ՝ վարսահարդարներ, կոշկագործներ, հացթուխներ և այլն: Նրանք իրենց փորձն ու գիտելիքները փոխանցեցին մի շարք երիտասարդների, որոնք ստացան վկայագրեր:

ՀՕՖ-ը աչքի ընկավ նաև Հայաստանում իրագործած շինարարական լայն գործունեությամբ: ՀՕՖ-ի առաջին հայրենաշեն խոշոր ձեռնարկումը «Ս. Վարդան» բնակելի թաղամասի կառուցապատումն էր Ստեփանավանում: 1994 թ. ՀՕՖ-ը սկսեց այդ թաղամասը քաղաքի հետ կապող ճանապարհի շինարարությունը: 1995 թ. Աշտարակի շրջանում շահագործման հանձնվեց 375 մ երկարություն ունեցող կամուրջը, որի կառուցման համար ՀՕՖ-ը ՀՀ տրանսպորտի և հաղորդակցության նախարարությանը հատկացրել էր 30 մլն դրամ[18]: ՀՕՖ-ի շինարարական ծրագրերի առանցքը դպրոցաշինությունն է: Շնորհիվ ազգային բարերար Ջ. Օյունջյանի շուրջ 500 հազար ԱՄՆ դոլարի նվիրատվության՝ ՀՕՖ-ը 2000 թ. ամբողջությամբ նորոգեց Գյումրիի թիվ 21 դպրոցը, անցկացրեց ջրագիծ և գազամուղ, կառուցեց նոր կաթսայատուն, բարեկարգեց շրջապատը[19]:

1994 թ. ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը 80 000 ԱՄՆ դոլար հատկացրեց ՀՕՖ-ին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության հետ համագործակցելով՝ իրականացնելու «Փարոս» ծրագիրը: ՀՕՖ-ը կազմակերպեց նաև բարեգործական բազում համերգներ և մշակութային կարևոր միջոցառումներ: ՀՕՖ-ը իր բարեգործական ձեռնարկներով աչքի ընկավ նաև Արցախում: Այդ ձեռնարկների իրագործման նպատակով 1997 թ. Ստեփանակերտում բացվեց ՀՕՖ-ի մասնաճյուղը:

Սփյուռքահայ կազմակերպություններից հայանպաստ ակտիվ գործունեություն ծավալեց նաև Հայ օգնության միությունը (ՀՕՄ), որն իր հիմնադրման օրվանից՝ 1910 թ. սկսած, իր առջև գլխավոր խնդիր դրեց օգնել իր հայրենակիցներին: ՀՕՄ-ը հայ կանանց բարեգործական կազմակերպություն է: 1991 թ. ստեղծվեց ՀՕՄ-ի երևանյան մասնաճյուղը, որն արցախյան պատերազմի հետևանքով որբացած բոլոր երեխաներին վերցրեց իր հովանավորության տակ՝ հոգալով նրանց ուսման, առողջու-

[18] Ազգ, 17.II.1995:
[19] ՀՀ, 6.XI.2000:

թյան պահպանման խնդիրները: ՀՕՄ-ը մարդասիրական մեծ օգնություն տրամադրեց զոհված, վիրավոր և կռվող ազատամարտիկների ընտանիքներին: ՀՕՄ-ի երևանյան գրասենյակը սկզբնական շրջանում կոչվում էր ՀՕԽ՝ Հայ օգնության խաչ, որի դռները բաց էին նաև անօգնական ծերերի, բուժման կարիք ունեցող մարդկանց համար: ՀՕՄ-ի հայաստանյան մասնաճյուղը ձեռնարկեց նաև մեծածավալ և հիմնավոր գործեր, որոնցից էին Ախուրյանում մոր և մանկան նախածննդյան շրջանի հիվանդությունների կանխարգելիչ կենտրոնի կառուցումը, արտադրական կարևոր հիմնարկների բացումը և այլն:

Սփյուռքահայ կազմակերպություններից է նաև 1989 թ. ստեղծված Հայկական միացյալ ֆոնդը (ՀՄՖ), որը 1989-2000 թթ. ընթացքում 285 մլն դոլար արժողությամբ մարդասիրական նպաստ է ուղարկել Հայաստան[20]: ՀՄՖ-ի միջոցով հայրենիքին իրենց աջակցությունն են ցուցաբերել սփյուռքահայ այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցությունը, Ամերիկայի հայկական համախմբումը, Հայ օգնության միությունը, Լինսի հիմնարկը, «Իզմիրլյան» հիմնադրամը, Ամերիկահայ մշակութային ընկերակցությունը, ՀԲԸՄ-ն և այլն: ՀՄՖ-ն ժամանակի ընթացքում դարձավ ամենամեծ ամերիկահայ բարեսիրական կազմակերպությունը: 1990-ական թվականների սկզբում ֆոնդի գլխավոր գործառնությունը վառելանյութի «Զմեռ» ծրագիրն էր: 1994 թ. ֆոնդը, հանգանակելով 21 մլն դոլար, Հայաստան ուղարկեց մազութ, բենզին: Շնորհիվ այդ օգնության՝ Հայաստանի քսան քաղաքների բնակչության մեծամասնությունը էլեկտրականություն և ջեռուցում ունեցավ[21]:

Վառելանյութից բացի, ֆոնդը հայրենիք առաքեց մեծ քանակությամբ մարդասիրական օգնություն՝ հատկապես դեղորայքի ձևով:

1992 թ. Հայաստանում պաշտոնական գրանցում է ստացել «Հովարդ Կարագյոզյան բարեգործական հիմնադրամը»՝ որպես բարեգործական հասարակական կազմակերպություն[22]: «Հովարդ Կարագյոզյան» մանկական հիմնադրամը 1921 թ. Նյու Յորքում հիմնադրված կազմակերպություն է: Նրա գործունեության նպատակը ողջ աշխարհի հայ երեխաների մտավոր, ֆիզիկական և մշակութային զարգացումն է: Հիմնադրամի բոլոր ծրագրերն առնչվում են երեխաների կյանքի և առողջության պահպանմանը: Հայաստանում իր գոյության հենց առաջին տարվանից «Կարագյոզյան» հաստատությունը նաև ուսումնական կենտրոն է մասնագետների վերապատրաստման և որակավորման համար: 1993 թ. Երևանի Նորք թաղամասում բացվեց հաստատության առաջին ատամնաբուժարանը, որը ժամանակի ընթացքում դարձավ կազմակերպության հայաստանյան կենտրոնը: Հաստատությունն իր մասնաճյուղերն ունի Գյումրիում, Ստեփանակերտում, Գորիսում, Վանաձորում և այլն: Ընկերակցությունն իր բարեսիրական գործունեության մեջ ընդգրկեց նաև սոցիալական ոլորտը. օգնություն ցուցաբերեց Խարբերդի, Գյումրիի, Երևանի «Նորք» մանկատներին, Գորիսի գիշերօթիկ դպրոցին, Գյումրիի «Ընտանիք» հասարակական կազմակերպությանը:

---

[20] Փարոս, 15.VII.2000:
[21] ՀՀ, 21.XII.1994:
[22] Սփյուռքահայ կազմակերպություններ, Ե., 2002:

«Կարագյոզյան» հաստատությունը 1991-1999 թթ. Հայաստանում կատարեց 2,5 մլն դոլարի ներդրում, որից մեկ միլիոնը ՀԲԸՄ-ի հետ համատեղ՝ վերականգնողական վիրաբուժության բաժանմունքի հիմնադրմանը[23]: Մյուս 1,5 մլն դոլարը «Կարագյոզյան» հաստատությունը հատկացրեց իր հինգ կլինիկաներին: Հիմնադրամը մանկական է. իր գործունեության ընթացքում ունի միայն տարիքային սահմանափակում՝ սպասարկելով մինչև տասնհինգ տարեկաններին: 1993-1999 թթ. հաստատության կլինիկաներում գրանցված էին 55 հազար երեխաներ[24]: 1992-2001 թթ. ընկերակցությունը հայաստանյան իր կազմակերպության ծրագրերի իրականացման համար ներդրել է ավելի քան 3 մլն դոլար:

Երկար կարելի է թվարկել սփյուռքահայ կազմակերպությունների և անհատների իրականացրած բազմաբնույթ ծրագրերը Հայաստանում: Այդ ծրագրերի շնորհիվ նորանկախ հանրապետությունը հաղթահարեց բազմաթիվ դժվարություններ, աստիճանաբար դուրս եկավ սոցիալ-տնտեսական ծանր ճգնաժամից, կարգավորվեց հանրապետության ներքին կյանքը:

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ СВЯЗИ МЕЖДУ РОДИНОЙ И ДИАСПОРОЙ В 1990-ЫХ ГГ.

ПЕТРОСЯН К. Р.

Резюме

1990-ые годы ознаменовались тяжелым социально-экономическим кризисом для нашей республики. Землетрясение 1988 г. и Карабахская война отрицательно сказались на экономике республики. И в это судьбоносное время неоценимую помощь оказала родине армянская диаспора-Спюрк. Различные армянские зарубежные организации и меценаты всеми возможными способами помогли Армении. Наши известные соотечественники Ш. Азнавур, К. Кркорян, В. Овнанян и др. претворили в жизнь различные проекты, сыгравшие решающую роль в экономике Армении и в преодолении возникших социально-экономических трудностей.

Следует отметить, что диаспора также испытывает большие трудности в плане сохранения национального облика в условиях западной цивилизации. Однако это не мешает активному сотрудничеству с диаспорой в социально-экономической сфере.

.

[23] ՀՀ, 2.XII.1999:

[24] Նույն տեղում: